№ 31 – ՓՈՍՏԱՐԱՆ ՎԱՆԱՑ ՏՈՒՐՔ

Տարեկան գինը 10 ռուբլի։
Կէս տարեկանը 5 ռ., երեք ամսականը 3 ռ., ամիսը 1 ռ.։

Ընդունի հայերէնով բոլորովին ձրի։
Թղթակցութիւնները եւ ուղղակի ամէն տեսակ գրութիւններ պէտք է ուղղել հետեւեալ հասցէով։

Վանք, Տպարանի վարիչ Ա. Ա. Ալամդարեանի։

Ծանուցումներ ընդունուում են տպարանի վարիչ Ա. Ա. Ալամդարեանի մօտ։

Ծանուցումների համար վճարում են 1 կոպէկ տառի համար։

Ծանուցումները ընդունուում են մինչեւ ամսի 25-ը։

Ամսագիրը հրատարակուում է ամսի 1-ին։

ՎԱՆ, 1-ԻՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ 1883 Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՐՑԱՐԱՆ

Ամսագիր գրական, գիտական եւ ընդհանրական բովանդակութեան։

Հրատարակութեան 1-ին տարի։

Ամսագրի գինը տարեկան 5 ռուբլի։

Ամսագրի հրատարակութիւնը կը սկսուի 1883 թ. յունուարի 1-ին։

Ամսագրի մէջ պիտի տպուին՝ 1) Գրական, գիտական եւ ընդհանրական բովանդակութեան յօդուածներ։ 2) Ազգային պատմութեան, ազգագրութեան, լեզուի, գրականութեան եւ ընդհանրապէս հայագիտութեան վերաբերեալ յօդուածներ։ 3) Ակնարկներ ներկայ ժամանակի գրական, գիտական եւ ընդհանրական շարժումների մասին։ 4) Ակնարկներ հայ ժողովրդի ներկայ կեանքի մասին։ 5) Ակնարկներ հայ գրականութեան նոր երեւոյթների մասին։ 6) Գրախօսութիւններ նոր հրատարակութիւնների մասին։ 7) Գրական եւ գիտական լուրեր։ 8) Մատենագրութիւն։

Ամսագրի մէջ պիտի տպուին նաեւ հայ հին մատենագրութեան նշանաւոր երկերը։

Ամսագրի խմբագրութիւնը կը յանձնուի Գարեգին Զարբհանալեանի։

Ամսագրի հրատարակութեան ծրագրի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ խմբագրութենէն։

Ամսագրի բաժանորդագրութիւնը կը սկսուի 1883 թ. յունուարի 1-էն։

Ամսագրի գինը կանխիկ վճարելու է խմբագրութեան հասցէով։

Ամսագրի բաժանորդագրութեան գումարները կարելի է ուղարկել նաեւ Թիֆլիսի Ալեքսանդրեան գրադարանի տնօրէն

տեղույդ Բարեգործական ընկերութեան, որ ինձ օգնէ նիւթական կողմից ուսումս շարունակելու: Շնորհակալեմ ընկերութիւնը իրա կարողութեան չափ, նշանակից ինձ մինչև յունվարի 1ն 1884 թ. ամսական 5 ռ. թոշակ: Այդ գումարից ես միայն ստացայ 5 ամիսվանը, իսկ ճնացեալ 35 ռ. որովհետև քաղաքումը գտանվում էր միայն քարտուղարը, բայց նախագահը, գանձապահը և անդամների մեծ մասը հեռացած էին (ամառվան ժամանակ էր), չստացայ: Այդ ժամանակ վերջացնելով իմ ուսումս, սպասել չը կարողացայ և ձանապարհ ընկայ դէպի Ռուսաստան բարձր ուսում ստանալու: Ընթերցողը, այստեղ, իրաւունք ունի հարցտալ—ի՞նչ անխելքութիւն է չ'ապահոված, գնում եմ օտար քաղաք ուսում ստանալու: Բայց ես կարող եմ նորան պատասխանել հետևեալը—առաջինը բէալական ուսումնարանից ստացայ 200 ռ., երկրորդը, և ըլը խաւորը, բարի մարդիկ ինձ խօսք տւին, որ նոքա կ'աշխատեն և կը խնդրեն Բար. ընկ. ինձ համար օգնութիւն: Ես կարծեմ ամեն մի ե-բիտասարդ, որը սրտով ցանկանում է ստանալ, իրա հասկացողութեամբ ընտրած բարձր ուսումը (ինչպես ես հաւանեցայ և ընտրեցի միայն գիւղատնտեսական մասը) կ'անէր ինչ որ արել եմ ես:

Լինելով նեղ դրութեան մէջ, նիւթական կողմից, և մի և նոյն ժամանակ չ'իմանալով Բարեգործական ընկերութեան հաստատ հասցէն, ես քանիցս անգամ նամակով խնդրած եմ թիֆլիս. մէկ տարի ճանօթ մարդուց վերոյիշեալ հասցէն, բայց դժբաղդաբար, ինչպես առաջը ասած է—կուշաը քաղցածին ընկեր չէ, ես այդ պարոնից ոչինչ պատասխան չը ստացայ: Անցաւ մի ժամանակ և ես վերջը հասցէն ստացայ պետերբուրգից պ. Եղեանցից, որին ես պարտք եմ համարում միևնոյն ժամանակ յայտնել իմ անչափ շնորհակալութիւնս և նմանապես էլ պետերբուրգի հայ հասարակութեան: Մեծ. պ. Եղեանցը միշտ իրա օգնութեան ձեռքն է հասցրել, կամ աշխատել, որ վերոյիշեալ հասարակութիւնը օգնէ ինձ:

Իմանալով հասցէն, ես իսկոյն խնդիրք և վկայական ինստիտուտի կողմից պատրաստեցի և յուլիսի 5 1884 թ. ուղարկեցի Բարգ. ընկ. վերայ, խնդրելով օգնութիւն, իսկ ուղեղս ասած, առաջվայ 35 ռ. համար ոչինչ չեմ յայտնում խնդիրքս, որովհետև դիտեմ որ այդպէս «փղբրիկ գումարը» շատ չատ է մոռացվում: Խնդիրքիցս յետոյ անցնում է արդէն 3 ամիս, իսկ ես ոչինչ պատասխան չեմ ստանում ընկերութեան կողմից, անցնում է և 1 ամիս և նամակով խնդրում եմ մէկ ծանօթ մարդից, որ գնայ խորհրդի նախագահի մօտ և իմանայ իմ թղթերիս պատասխանը: Նախագահը և քարտուղարը յայտնում են որ ինձանից ոչինչ չեն ստացել: Բայց որովհետև ես ուղարկած եմ խնդիրքը գակաղնոյ նամակով, ուրեմն իրաւունք ունեմ պահանջել փոստատից, որ այդ վերջինը իմանայ նամակիս կորչելու պատճառը: Եւ ի հարկէ, այդպէս էլ անում եմ և ահա այս նորերում Թիֆլիսի փոստատունից ինձ պատասխանում են, որ իմ նամակս Բարգ. ընկ. անուամբ ստացել է Վլադիմիրովը:

Հիմա ես կամենում եմ իմանալ—առաջինը՝ այդ պարոնը ի՞նչ գործի տէր մարդ է, երկրորդը՝ արդեօք պ. Վլադիմիրովին Բարգ. ընկ. կողմից իրաւունք տո՞ւած է ստանալ իրա անուամբ նամակները (ես կարծեմ այդ իրաւունքը թէ՛ արքունական և թէ՛ մասնաւոր հասարակութիւններում տուած է միայն քարտուղարին) և երրորդը՝ պ. Վլադիմիրովը ի՞նչ պատճառով չէ ցոյց տալիս Բարգ. ընկ. իմ թղթերս:

Յուսով եմ որ Բարգ. ընկ. խորհրդի անդամները, եթէ իրանք էլ մի ժամանակ քաշել են չքաւոր ուսանողի գառը վիճակը, կարգալով իմ փոքրիկ նամակս առանց ուշադրութեան չեն թողնիլ վլադիմիրովի արարմունքը:

Նիկողայոս Թառումեան.

Նոր-Ազնաքանդրիա:

ՍՈՒԻՐԱՄ

10 ապրիլի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» թերթի)

Իմ նախորդ նամակի վերջերում խոստացած էի վաղայ դիւղին նշանաւոր հնութիւնների վերայ խօսել: Այժմ դառնալով դէպի այդ հնութիւնները հաղորդում եմ մեր հնասէր սիրելի ընթերցողաց: Տեղացիք սովի բաղդի բերմամբ գաղթել են ընտանեօք Սիւնեաց գաւառի Մայրավանի Տաթևի գիւղերից 30 տան չափ, և գալով վրաստանի կողմերը գտել են իրանց համար մի յարմարաւոր առօրեայ ապրուստ Հայաթաղելու տեղ, և բնակուել են այս գիւղի մէջ: Սկսելով այն օրից մինչև այժմ պարապում են հողագործութեամբ: Վաղայ ասուած գիւղը գըտնվում է Սուրամից արևելեան կողմը տասն վերստ հեռաւորութեամբ. ինչպես տեղացիք պատմում են իրենց նախնիքներից լսած հնութիւն է ասոյա այդտեղ գալու ժամանակը, ըստ հաշուոյ ասցա 300 տարի պիտի լինի մօտաւորապէս: Այս գիւղի բնակիչների ազգանուններն, որոնք մինչև տեղից գաղթել են, այն օրից սկսած մինչև այժմ առանց փոխելու հայկական անուն և ազգանուններ են՝ Յակովը Մամուլեանց, Յովհաննէս Մելիք-Յակովլեանց, Ադարէկ Ոսկանեանց, Թունեայ Մոսեանց և Յարութիւն Մելեանց: Սոցա մէջ չը կան ուրիշ որ և իցէ տեղերից եկած վերաբնակողներ. այս գիւղի մէջ մօտաւորապէս 60 տուն են. Թէ աղքատ և Թէ հարուստ հողագործներ: Երբ տեղացիք եկել են այս գիւղն անուն տուել են վաղայ, այսինքն մեզանից առաջ եղած գիւղ: Սոքա արդէն ի հնուց կառուցած պարտատ գտել են քարուկրեայ ս. Աստուածածնայ անուամբ մեհատան քարուկրեայ շրջապատուած պարիսպով և սեն-եակներով եկեղեցւոյ կից՝ կրօնաւորաց բնակարանք: Երբ տեղացիք եկել են այս գիւղում գտել են յիշուած մեհատանում բնակող լեզգիք և Թաթարներ, որ բացի իրանց բընակվելուց, նա և կապած են ունեցել իրանց չորքոտանի ընտանի կեանդանիներ սոյն եկեղեցւոյ մէջ: Ինչպէս տեղացիք պատմում են այժմ իրանց պապերից աւանդուած այդ եկեղեցւոյ մէջ բնակուող Թաթար և լեզգիքներին հալածել են գիւղի մէջ մտնելուն պէս և գարձրել են սրբաւայրը Աստուծոյ տաճար: Այս տաճարը բաժանուած է հաստ պատերով և կամարներով հինգ ընդարձակ մասեր. բայց ներքևի, ս. սեղանից դիւց նա ևս ունի վերնատանը ս. պատարագ մատուցանելու սեղան. քահանաների սպասաւորողների և ժողովուրդի կանգնելու տեղ: Երբ վերնատանից դուրս ես գալիս հիւսիսային կողմը տեսնում ես աչքի առաջ ընկնող երեք պատեր մարդաչափ բարձրութեամբ փոքրիկ ծակերով

անտեղ, անկիւնում, ով որ չարժվում է: Մթթէ, անկարելի է, բայց ոչ նա է, այդ Բիլեզէրն է:

— Բիլեզէր, այդ դուք էք:

— Այո, ես եմ,—խուլ ձայնով պատասխանեց վաճառականը:

— Բայց, ի սէր Աստուծոյ, ինչ ենք արել, որ մեզ փակել են, կարծես իրրև երկու աւազակների:

— Ինչ որ միւսները արել են, ես չեմ իմանում, իսկ ես ամենևին մեղաւոր չեմ, տես ինչ արին իմ ապրանքս:

Թեզեը յուսահատութեամբ նայում էր իր ծեծուած գլխարկներին: Վիշտն, որ պատճառում էր նրան այս տեսարանը, այնպէս մեծ էր, որ սա մոռանում էր չղթաները և թոկերը, որոնցով կապած էր և մինչև անգամ իր ժբաղդ ոտնամաններին:

— Դուէ ասացէք ամենքին, աղաչում եմ ձեզ, որ ես ձեզ չեմ օգնել:

— Բայց ինձ ինչումն են մեղադրում:

— Ասում են որ... դէ ինչու համար էք ինձ ստիպում ասելու այն, ինչոր դուք գուշակում էք, թէ խօսում են:

— Երդվում եմ ձեզ, չը գիտեմ:

— Ասում են, որ իբրև թէ դուք գողացել էք Զինայիդայի փողերը:

— Աստուած իմ, ինչ նենգաւորութիւն է, բայց ի հարկէ դուք չէք հաւատում, այնպէս չէ:

Բիլեզէրը լռեց: Էնդրէասը ամենքը համոզված էին Չեկկի յանցաւորութեան մասին, միայն մի բան չէին կարող հասկանալ թէ ինչ է պիտի նա ճնացած փողերը, անկարելի է որ նա ծախսել էր վնց հաղար ֆրանկ մէկ օրում: Լուսադէմին Չեկկին և Բիլեզէրին պահանջեցին կառավարչի մօտ. ընդունարանում հաւաքված էին զանազան գիւնաների տէրերն, որոնց մէջ Չեկկը անցկացրել էր անցեալ օրը, նաւատէրը, որ տարաւ նոցա Նանտ, նոյնպէս ազնտեղ էր: Այս վկաների տեսարանը ծանր երազի օրպատութիւն գործեց նրա վերայ: Կառավարիչը չատ համոզում էր Չեկկին, որ խոստովանի իւր յանցանքը, հաւատացնում էր նրան, որ առ այժմ բոլորը գաղանիք կը մնայ նրա և Ռուդիկի մէջ, որովհետև նրա, կառավարչի, պահանջով քննութիւն կը լինի միայն երեք օրից յետոյ: Ռուդիկը, որ ներկայ էր այս խօսակցութեան ժամանակ, սիրով աղաչում էր նրան յետ տալ ճնացած փողերը, բայց երիտասարդը բոլոր նոցա համոզմունքներին պատասխանից միայն.

— Ես ոչինչ ոչ օրից չեմ գողացել:

— Բայց գրտեղից վերառաք դուք փողերը ինջոյքի համար:

«Մայրս ուղարկել է», հէնց ուզում էր ասել, երբ կանգնեցաւ և հծծեց.

— Դա իմ խնայողութեանս պատուղն է:

Կառավարիչը վերջապէս բարկացաւ, հրամայեց Չեկկին բաժանել Բիլեզէրից, որովհետև հաւատացած էր, ինչպէս և Ռուդիկը, որ վաճառականը իւր վատ խորհուրդներով փչացրել է նրան:

Անվերջ թվեցաւ այս օրը խեղճ բանտարկեալի համար: Ի՞նչպէս ապացուցանէր իւր անմեղութիւնը,—յոյց տայ մօր նամակը, վայ թէ դ'Արժանտոնը խմանայ: Երիտասարդ մարդկանց խելքովը, ինչպէս յայտնի է, չէին պատճառները չաճախ աւելի կշիռ են ունենում քան նշանաւորները. նա երևակայում էր Օլենտուրը սարսափելի տեսարան. Թէ մայրը լալիս է. ախ, նա չի խոստովանիլ գաղանիքը: Երեկոյեան նրա մօտ եկաւ Ջինայիդան: Խեղճը երեկվանից չատ և չատ լալիս էր. նա չգիտէ ազատում էր բարի և սիրելի Չեկկին, դարձնել նրա ճնացած փողերը, նա չէր կարող բոլորը ծախսել. առանց օժիտի նրան Մաժէնը չի առնիլ, իսկ ինքը նրան չատ է սիրում. Չեկկը լալիս էր նրա հետ միասին, բայց կրկնում էր միևնոյնը.

— Երդվում եմ, Ջինայիդա, որ ձեր փողերը ես չունիմ:

Մնացել էր միայն վերջին միջոց, կառավարիչը դրեց Շարլոտային նամակ, որի մէջ յայտնում էր, որ նրա որդին գողացել է վեց հազար ֆրանկ և եթէ երեք օրից յետոյ նա չի ուղարկիլ այս գումարը, յանցաւորը արդարադատութեան կը յանձնվի:

— Ա'հ, Էնդրէից նամակ կայ,—բացականչեց դ'Արժանտոնը և մի կողմը գնալով այն, վերառաւ լրագիրները:

Նա միշտ այս ձևով էր վարվում, նա գիտէր որ Շարլոտան միայն իւր որդու վերայ է մտածում և չէր ներում նրան այդ բանը:

Վերջապէս չարաբաղդ նամակը բացվեցաւ, բանաստեղծը կարդում է և դեղնած տալիս է Շարլոտային:

— Ինչպիսի հարուած էր, մանաւանդ որ խղճմտանքի ձայնը, որ չէր կարող խլացնել աչխարհի ոչ մի խմաստակութիւն, ասում էր. դու ես միայն մեղաւորը, ինչու համար դու Նրան հեռացրիր: Բայց Նրան պէտք է աղատել, բայց որտեղից վերառնէր փող, նա ինքը ոչինչ չունի, դ'Արժանտոնից նա չի խընդրիլ, նա մանաւանդ որ դ'Արժանտոնը ատում է Չեկկին և ժլատ է: Լաւ յիշեցել, կը դառնամ դէպի Bon-Ami-ն: Երկիւղածութեամբ, կակազելով իւրաքանչիւր խօսքի վերայ, նա խօսեց այդ մասին: Նրա մեծ զարմանքի համար, դ'Արժանտոնը սիրով ընդունեց այդ դիտաւորութիւնը, յայտնեց իւր համաձայնութիւնն և մինչև անդամ առաջարկեց ուղեկից լինել նրան մինչև Տուր, ուր նա պատրաստվում էր գնալ խօսելու Bon-Ami-ի հետ և որ բնակվում էր այդ քաղաքի չրջակայքումը:

— Այնտեղից ուղիղ կ'երթանք և Էնդրէն, փողերը կը տանենք:

— Էնդրէ էլ կ'ո գնկցեմ, ասաց դ'Արժանտոնը:

— Ո'հ, ինչպէս դու բարի ես, ինչ պէս բարի ես, կրկնում էր Շարլոտան համբուրելով նրա ձեռքերը,—բայց նա վախենում էր թողնել նրան Տուր, երկիւղ կրելով որ չը միայ այնտեղ: Բայց դրանից նա ուզում էր քիչ ճանապարհորդել: Նոքա գնացին նոյն գիւղերը եւ բնակուեան գնացքով, իսկ միւս օրը առաւոտեան հասան Տուր, իջևանեցին հիւրանոցում, վերառան կառք և գնացին Bon-Ami-ի մօտ: Նկատելով ծառերի միջից վերածնութեան ոճով շինուած ամրոցը, դ'Արժանտոնը զգաց զօրեղ վրդովմունք: Վայ թէ նա այնտեղ մնայ, մտածում էր նա—Մթթէ նա ներս կը մտնի, անհնգստութեամբ մտածում էր Շարլոտան: Բանաստեղծը վճռեց նորա կասկածները, հրամայելով կառապանին կանգնել ամրոցի ծառուղու առջև: Նա գնաց պարտէզ զբօսնելու, իսկ տիկինը մնակ մնաւ տունն: Սարսափելի րոպէներ անցկացրեց դ'Արժանտոնը, նայելով վանդակի միջից Bon-Ami-ի թագաւորական բնակարանին և սպասելով Շարլոտայի վերադարձին:—Ցաւ, ահեղների ձայն է, նա է, Այո, նա է—վայլուն, բաղդաւոր:—Նիստ չուտով, աղաղակում էր խեղճը, իւր բանաստեղծին իմ բարեկամ, բացականչեց նա, հէնց որ կառքը չարժվեցաւ, յանդուգնութիւնը գերազանցեց իմ սպասածիցս, ինձ տալն 10,000 ֆրանկ, խնդրելով վճարել պարտքն, իսկ ճնացած փողերը բանացնել օգուտով Չեկկի համար, որի համար մինչ պատրաստվում էին այդ ընծան անելու:

Նոյն գիշերը նոքա ճանապարհ ընկան դէպի Լնդրէ, բայց Շարլոտան ճնայ Լա-Բաս-Նորմանդիայում և դ'Արժանտոնը զը-

ԴՈՒՇԱԺՈՆՈՒԹԻՒՆ

Փետրուար 1885 թ. 24 աստիճան.

Ցուցակ եւրոպական Տաճկաստանի ապրանքների եւ նաւերի, որ մտան Պոլիս եւ ելան անտի Փետրուարի 23-ին.

Ի Մարսէլիա.

Ի Լիվուռնօ.

Ի Սալոնիկ.

Ի Սմիռնա.

Ի Ռոդոսթօ.

Ի Ղալաթիա.

Ի Ռուսչուկ.

Ի Վարնա.

Ի Գալաց.

Ի Պուրգաս.

Ի Կոստանդնուպոլիս.

Ի Տարագոնա.

Ի Ֆիումէ.

Ի Վենետիկ.

Ի Տրիեստ.

Ի Մարսէլիա.

Ի Ռուսչուկ.

Ի Վարնա.

Ի Գալաց.

Ի Պուրգաս.

Ի Կոստանդնուպոլիս.

Ի Մարսէլիա.

Ի Լիվուռնօ.

Ի Սալոնիկ.

Ի Սմիռնա.

Ի Ռոդոսթօ.

Ի Ղալաթ

սաստանին տալը, որովհետև այդ ովազիսի տիրապետութեամբ Ռուսները կարող են Հերաղը բաժանել Բաղախչանից և բոլորովին կարճել աֆղանական Թուրքեստանի յարաբերութիւնը Կաբուլի հետ ձմեռուան ամիսներին։ Բայի դրանից այդ հանգամանքը Ռուսաստանին միջոց կը տայ գաղտնի կերպով հանելու Կաբուլ Բամիանի անցքով և գործելու ազատ Մուրղաբի վերին ընթացքում և Գուզարայի գաւառում»։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Արքունի կալուածոց նախարարի պաշտօնատար պ. Տիխէեվը կովկասում ըստացել է վերջնական հաստատութիւնը ծրագրի կանգնելու Ալեքսանդրեան այգու վերին բաժնում զինուորական պատմական թանգարանի շինուածքը։ «փառաց տաճարը» կը կանգնի բագով, այնպէս, որ չաղրուանը չի խանգարիլ և կունենայ անցք անցուդարձ անողնների համար։

***

Կովկասեան զինուորական նահանգական առենի տան շինութեան կապալառու պ. Կաստումովը Օլդինսկայա փողոցում գտել է լարձի թողի արած քաղցը ջրի աղբիւր, որ բերած է Արողիթեվիից։ Կաստումովը սկսել է մաքրել առ այն աղբիւրն և նորոգել հին խողովակները։ Նա մտադիր է, ասում են, շինել տալ աւազան, որտեղից վերայի բնակիչները ձրի կարող են հանել լաւ և մաքուր ջուր։ Նոյնպէս այդտեղից մըտադիր է ջուր տանել զինուորական նահանգական առենի նոր շինուածքը։

***

Կայսերութեան ներքին նահանգները փոստայով խրկվելիք առաքները ծովեզրեայ և ցամաքային առնմանների վերայ գանված քաղաքներից և գիւղերից ներկայացվում են առաջ մաքսային հաստատութեանց կամ սահմանապահ հսկողութեանց անգամներին և յետոյ երբ սոքա անտղելից յետ առնդնները. կը դնեն նոցա վերայ իրանց կնիքը, փոստը ընդունում է նրանց ուղարկելու համար ըստ հասցէին։

***

Ամսոյս 21-ին կատարվեցաւ աղնուականաց հարիւրամեայ յոբելեանը չատ համեստ կերպով։ Թիֆլիզի նահանգի աղնուականները ժողովեցան միասին. կարդացվեցաւ 1785 Եկատերինէ II կայսերուհու հրովարտակն և այս առիթիւ աղնուականներից մէկը ճառ խօսեցաւ։ Ապա բոլորեքեանք գնացին Սիոնի մայր եկեղեցին, ուր կատարվեցաւ հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ մեծ կայսերուհու համար և մաղթանք ներկայ կայսեր երկար կենաց համար, որից յետ ամենքն էլ ցրուեցան իրանց տները։

***

ԲԱԳՈՒԻՑ պ. Ս. Ամիրեանցը գրում է մեզ.—Ներկայ ապրիլ ամսոյս 13-ին Բագուայ հասարակութեանը սիրելի բարեկրօն թաթէոս աւագ քահանայ Բուդաղեանը, կարճատև բայց ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճան տարին դեռ չը լրացած, կնքից իր մանկանացոյն։ Հանգուցեալ հայրը իր կենդանութեան ժամանակ այնքան բազմաթիւ բարեգործութիւններ է արել թէ տեղիս և թէ Բագուից դուրս հասարակութեանց համար, որ աւելորդ եմ համարում մի առ մի թուել այստեղ։ Հետևեալ օրը ամսոյս 14-ին, ամբողջ Բագուայ հասարակութիւնը ներկայ էր ս. պատարագին։ Օծման հանդէսը կատարեց հայր Խորէն Մերզաբէկեանը։ Հանգուցեալի դագաղի վրայ դրվեց երեք փառաւոր պսակներ կարգացվեցան նոյնպէս մի քանի ճառեր։ Լացը ու սուգը ընդհանուր էր։ Պատարագիչ հայր Խորէն Մերզաբէկեանը մի չատ ազդու քարոզով նկարագրեց մի առ մի հանգուցեալ հայր Բուդաղեանի իւր կենդանութեան ժամանակ արած բարեգործութիւնները և հետևապէս չտակից աւետել հայ հասարակութեանը և հետևեալ բարենպատակներին, որ իւր անունը յաւիտեան անմոռաց պահելու համար, մեռնելուց մի քանի օր առաջ օրինաւոր կերպով կըտակել էր հոգևոյսը։ 1. «Մարդասիրական ընկերութեան» 1000 ռ., 2. Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանին 500 ռ., 3. տեղիս հին եկեղեցւոյն—500 ռ., որ բաւականի պարտքի մէջ ընկղմուած է, 8. «Աղքատասիրաց ընկերութեան—300 ռ., 5. Շամախոյ թեմական դպրանոցին, որ իւր հայրենի քաղաքն է—300 ռ., 6. Շամախվայ թաղական դպրանոցին—200 ռ., 7. Սաղեանաւ ս. Յակոբեան վանքին, որ գտնվում է Շամախոյ գաւառում—400 ռ., 8. Երուսաղէմայ ս. Յակոբեայ վանքին—100 ռ., 9. Քիվլարի և Խաչմազի դպրոցներին, որ գտնվում է Ղուբայի գաւառում 200 ռ., 10. չորս որբ օրիորդների—1000 ռ., 11. մի որբ օրիորդի, որ իրանց տան ծառայում է պսակման համար որպէս օժիտ —300 ռուբլի, և 12. երեք քոյրերին—600 ռ.։ Այդ բոլորը ճիշդ շանզկութիւններ են, որ լսվից եկեղեցւոյ մէջ հայր Խորէնից։

Պատարագիչ հայրը, վերջացնելով իւր քարոզը, առաջարկեց ժողովուրդին անմիջապէս ստորագրութիւն բանալ և հանգանակով մի որոշ գումար հանգուցեալի անուամբ երկու չքաւոր ուսանողներ պահել բարձրագոյն ուսումնարաններում։ Ժողովուրդը միաբերան խընդրեց հոգևոր և մարմնաւոր իշխանութիւններից, հանգուցեալին թաղել եկեղեցւոյ գաւիթում, որը և իսկոյն կատարվեց։ Թաղումից յետոյ ժողովուրդը անխափան հրաւիրվեցան «Մարդ. ընկերութեան» անենաները, ուր պատրաստուած էր փառաւոր ճաշ։ Ճաշում էին մօտ 500 մարդիկ։ Որպէսզի պահելու առիթիւ բացուած ստորագրութեան հետևանքը կը յայտնեմ ժամանակին։

***

ԹԻՄԻՐԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ պ. Սասունը գրում է.—Ամսոյս ութին թատրոնական բեմի վերայ բաղդ ունեցանք անանելու հայ թատերասէրների մի հանուան խումբ որոնք յայտնելով, դիմազրկով ամենն սքղնչների, յաջողեցրել են «Գալալ Ղազօ» կատ. և «Գիշերվայ սարբը խեր է» վոդեվիլը։ Ներկայացումն յաջող անցաւ, դրանից աւելի պահանջելը անկարելի է այն երիտասարդներից և սիրելիներից, որոնք առաջին անգամ բեմ դուրս գալով, ներկայացնում են թիֆլիզի լեզուով և թիֆլիզի կեանքից վերցրած պիէսաներ։ Իրրև բարոյական պարտք եմ համարում հրապարակաւ խորին շնորհակալութիւնս յայտնել յարգելի տ. Ս. Փարեմուզեանին, որ առաջին անգամ օրինակ եղաւ բեմ դուրս գալով Թեմիր-խան-Շուրայում, այո, ընթերցող, միայ շնորհակալութեան և յարգանքի արժանի է այն սիրելին կամ օրիորդը, որ չը նայելով բամբասողներին (մենք լաւ «բամբասարան» ունինք) առաջին անգամ ուրիշներին օրինակ լինելով Դաղստանում, Թեմիր-խան-Շուրայի նըման քաղաքում, բեմ է դուրս գալիս։

Ձատէյի ժամանակ յարգելի տ. Փարեմուզեանը հիանալի կերպիւ ածում էր պիանինօի վերայ «Գիծկոնակ» և «Երբ որ բացուին» երգերը։ «Գալալ Ղազօ» մէջ Սիրգսլանի դերը, իսկ «Գիշերվայ Սարբը խեր է» վոդեվիլի մէջ Սարթակի դերը կատարեց յարգելի տիկինը, որ առաջին կօրժենեանցը, պատիւ և տիկին կօրժենեանին, թատրոնում կը տեսնէիք ուրախ, թուրք և տրէայ։ Պետրովսկ քաղաքից եկել էին շուրա նոյն իսկ թատրոնին ներկայ գտնուելու։ Բայց ինչ ասեմ մեր Շուրայի հայերից չատերին, որոնք բացի այն որ տոմսակներ չեն առնում, բացի այն որ ամեն միջոց գործ են դնում այդ բարի և օգտակար գործը խանգարելու նաև բամբասանքով աչխարհ են թնդացնում. գոնէ ամաչէին հանդիսականներից, որոնք իրենց ներկայութեամբ պատուում էին սիրողների խումբին։ Ինչ կասէք ընթերցող այն անձանց, որոնք վոդեվիլի ժամանակ գալիս են նստում-լսում, ապա ներկայացման օրն ասում. «ինչ հարկաւոր է թատրոն գնալ, մենք արդէն տեսել ենք»։ Այս էլ նոր ձև է շնորհակալութիւն նաև պ. Յովհաննիսեանին, որ բացի այն որ իրրև սիրող մասնակցում էր ներկայացման, նաև աչխատում էր ամեն կերպով։

***

Նայնը հաղորդում է նոյն տեղից.—Լսում ենք որ երկրորդ անգամ սիրողների խումբն ուզում է ներկայացումն տալ և արժ. հայր փարեմուզեանը արդէն դրել է պիէսաներ բերել տալու։ Կատարեալ յաջողութիւն ցանկանալով այդ հանուան խմբին, կը խնդրէինք Շուրայի հայ հասարակութեան աչկակել այդ բարի գործին, խրախուսել սիրողներին թող քաչալերեն, նպատակը սուրբ է և բարի, թող չը կարծեն թէ դրանից մի կոպէկ անգամ սիրողները օգուտ կարող են ունենալ. կոպէկ առ կոպէկ հաշիւ է տանում պօլիցիան։

***

Վանայ մայր եկեղեցւոյ Տէր Յովհաննէս Սարգսեանի 50 ամեայ քահանայական յոբելեանի առթիւ բարեգործական նպատակով հաւաքվող գումարի մասին մի քանի քահանայք կասկած են յայտնել գումարի ում մօտ լինելու վերաբերմամբ։ Վանեցոց նոցա հանգստացնելու համար սրանով յայտնում ենք, որ այդ նպատակով մինչև այժմ ժողովուել է 840 ռ.։ Այդ գումարը գտնվում է իշխան Եզդի-Թէղմանեանցների մօտ, որը գծնել է տակաւին թղթեր մինչև որոշ գումարի լրանալը և առ այժմ ստորագրութիւնը չարունակվում է, ցանկացողք նրա ծխականներից կարող են ստորագրուել։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 2442.)

«ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» վարչութիւնը խնդրում է ընկերութեան անդամներին չնորհ բերել սոյն 1885 թ. մայիսի 5-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին քաղաքային տան դահլիճը ընդհանուր ժողով կազմելու։

Ժողովի պարապմունք առարկաներն են՝ (Կանոնագր. § 31.)

Ա. Ընկերութեան լրացած տարվայ աչխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին ընդհանուր հաշուի ընթերցումը։

Բ. Ընկերութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնը։

Գ. Վարչութեան ծախսուց նախահաշուի հաստատութիւնը։

(143) 4—2

Թիֆլիզի հայերէն դրքերի տպագրական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսաւ.

ՎԱՆԱՅ ՍԱՋ

Հաւաքածոյք վաստակաւորական ժողովրդական ԵՐԳԵՐԻ, ՀԷՔԻԱԹՆԵՐԻ, ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ և ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ (տեղական բարբառով)։
Ժողովեց ԳԷՈՐԳ Գ. ՇԻՐԵԱՆՑ.

Վաճառվում է Թիֆլիզի բոլոր հայ գրավաճառանոցներում.

Գինն է 75 կոպէկ։

(164) 3—1

ԱՒԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԱԻԱՆՈՑ

(ՎԱՐԱՆՑՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

Հիւանդներին ընդունում են ԱՄԵՆ ՕՐ։ Առաւօտեան՝ 9—11 ժ. Բուժկոնսիլ— մանկական և ներքին հ.,— Նաւասարդեան— վիրաբուժական (նաև ատամնացաւի) և վէներական հ., 10—11½ ժ. — Կին-բուժիչ Շէրբինա— մանկաբարձութեան, կանանց և մանկական հ. 11½—1 ժ. — Նաւմէնկո— աչքացաւի։ Երեկոյեան՝ 6—7 ժ.,— Նաւասարդեան— ամեն օր,— Շէրբինինա, Բուդկովսկի և Նաւմէնկո — երկքարթի և շաբաթի։

Համոթոգհոպ (կօնսիլիում—հիւանդանոցի բոլոր բժիշկների) երկքարթի և շաբաթ երեկ. 7—8 ժ.։

Հիւանդանոցը ունի սենեակներ գիշերօթիկ հիւանդների համար ամսական 40—80 ռ. վճարով։

Երթևեկ հիւանդները վճարում են 50 կ. Համախորհրդի համար 3 ռ.։ Զքաւորները՝ անվճար։

Հիւանդապետ՝ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ.
(100) 40—12

ՆՈՐ ԳԻՐՔ
ՁԵՌՆԱՐԿ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ս. ՄԱՆՈՒԿԼԵԱՆԻ.

Վաճառվում է Թիֆլիզում՝ Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան մէջ, կենդրոնական գրավաճառանոցում եղբարց Ղուկասեանցների բանկային գրասենեակում և պ. Ծատուրեանի լամպասլին մագազինում։ Օտարաքաղաքացիք փոստի ծախք չեն վճարում դիմելով հեղինակին՝ Тифлисъ Лабораторная улица. № 11. С. Манукьянцу. Գինն է 2 ռուբլի։ (29) 20—16

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ վաճառվում է, ԱԻԵՆԱՐԻՍ ՀԱԿԱՑ ՄԱՐԶԻՆ. Թարգմանեց Ռուսերէնից. Տ. Գիւլզադեանց։ Գինն է 40 կոպէկ։

(շ) 5—5

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է կենդրոնական, կովկասեան և պ. Շահվերդեանի գրավաճառանոցներում

ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԻԿ

Մանկական վէպ Հենր. Բաուէնի

Թարգմ. Գրիգոր Շահրուզադեանի

Գինն է 25 կոպէկ.

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է, կենդրոնական, կովկասեան գրավաճառանոցներում եւ պ. Համազասպ Արովեանցի կոշկեգործի խանութում.

ՆԺԴԵՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ. Գէորգայ Խարաշանց.

Գինն է 30 կոպէկ։ 2—2

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 24-го Апрѣля 1885 г. Типограф. М. Рот. и К-о На Гал. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.